ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ԵՎ ԹԵՄԵՐՈՒՄ

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ ԲԱՑՎԵՑ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԿԵՐՊԱՐՎԵՍՏԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

1998 թ. օգոստոսի 26-ին Գևորգյան Հոգևոր Ճեմարանում բացվեց հայկական ժամանակակից արվեստի ցուցահանդես՝ նվիրված Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակման 1700-ամյակին: Ցուցահանդեսը կազմակերպվել էր 1700-ամյակի գրասենյակի վարիչ-քարտուղար Տ. Մեսրոպ արքեպս. Աշճյանի քաջալերանքով և Մայր Աթոռի թանգարանների պատասխանատու-տնօրեն Տ. Ներսեհ աբեղա Խալաթյանի նախաձեռնությամբ:

Այս ցուցահանդեսը հետաքրքրական էր նրանով, որ իր մեջ միախառնում էր դարերի խորքից եկած հոգևորի ըմբռնումը և արտահայտում այն արդի եղանակներով: Մասամբ այն արտահայտում էր 20-րդ դարի շունչն ու ոգին, ժամանակակից մարդու աշխարհայացքն ու մտածելակերպը: Այս էր պատճառը, որ ցուցահանդեսն անվանվեց «*Ժամանակակից Ոգի*»: 15 նկարիչների ցուցադրված աշխատանքները տարբեր էին թե՛ արտահայտման ոճով, թե՛ բովանդակության և թե՛ գունային հնչեղությամբ:

Ցուցահանդեսի մուտքը երիզող ժապավենը կտրելու իրավունքը վերապահված էր Ն.Ա.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսին:

Բացման խոսքով ներկաներին դիմեց Տ. Զարեհ աբեղա Կաբաղյանը:

Տ. Մեսրոպ արքեպս. Աշճյանը, շնորհավորելով նկարիչներին և բոլոր ներկաներին, մաղթեց, որ ցուցադրվող աշխատանքների հեղինակները հավատարիմ մնան աստվածային արարչագործության, հոգևոր կատարյալ ներդաշնակության պատգամին և իրենց արվեստով հաստատեն այն ճշմարիտ գաղափարը, որ է՝ «գեղեցիկը կփրկի աշխարհը»:

Այնուհետև նկարիչներին հայրապետական իր պատգամն ուղղեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ ի մասնավորի ասելով.

«Մայրավանքից դուրս, սա առաջին այն հրապարակային ձեռնարկն է, որին ես նախագահելու կամ բացումը կատարելու երջանկությունը ունեցա վերջին ամիսներին իմ ունեցած անհանգստությունից հետո: Ես ի խորոց սրտի առաջին հերթին շնորհավորում եմ 1700-ամյակի գրասենյակի գործադիր մարմնի վարիչ-քարտուղար Մեսրոպ արքեպս. Աշճյանին, որ քաջալերեց այս ձեռնարկը և մեր երիտասարդ միաբաններից Հայր Ներսեհին, որն այնքան բծախնդրությամբ է հետևում բոլոր այն գեղարվեստական գործերին, որոնք պահվում են Մայր Աթոռի թանգարաններում ու նաև Անդրանիկին, Խաժակին և բոլոր նրանց, ովքեր աջակցեցին այս ձեռնարկին: Բայց ամենից առաջ շնորհակալություն պիտի ասեմ մեր հայրենի արվեստագետներին, ձեզ եմ շնորհավորում, որովհետև այս, ինչ որ դուք ցուցադրում եք, առանց տակավին

ամեն մեկը առանձին տեսնելու, ես այդ բոլորի մեջ միայն ցուցահանդեսը չէ, որ տեսնում եմ, այլ նաև հոգիի հանդեսը կտեսնեմ, հոգեկան ապրումների հանդիսավորությունը: Ինչպես գրիչը գրաֆիկի ձևով կարող է բանաստեղծության վերածել գիրը, դուք էլ գիծը, գույնը, նրանց հարաբերությունը ձեր արվեստագետի տաղանդով պաստառին եք դրոշմում, և պաստառների միջից հոգին է խոսում, խոսում է ձեր սեփական անձերի տաղանդի միջից: Հետևաբար շնորհավորում եմ ձեզ և ցանկանում, որ այս ցուցահանդեսը դուք ընդունեք որպես Մայր Աթոռի քաջալերանքը բոլոր այն արվեստագետներին, որոնք հոգուն խոսք կուտան գրով, գիծով և գույնով, կամ ձայնով ու երաժշտությամբ և թե քարով ու ճարտարապետությամբ: Մի խոսքով արվեստն է, որ կիմաստավորե, կհոգիացնե, կմեծացնե, կազնվացնե մեր ժողովրդի հոգին:

Շնորհավորում եմ ձեզ և մաղթում, որ բոլորդ էլ մի լավ պահ ապրեք հաղորդության պահ այն ոգու հետ, որ այդ պաստառների միջից է խոսում:

Աստված օրհնի ձեզ բոլորիդ»:

Ապա նկարիչները մեկ առ մեկ համբուրեցին Վեհափառ Հայրապետի սրբազան աջը, որին հաջորդեց նկարների դիտումը:

Ցուցահանդեսին ներկա էին Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը, Երևանի Պետական Համալսարանի Աստվածաբանության ֆակուլտետի դեկան Տ. Շահե արքեպս. Աճեմյանը, 1700-ամյակի գրասենյակի վարիչ-քարտուղար Տ. Մեսրոպ արքեպս. Աշճյանը, եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ Տ. Զավեն արքեպս. Չինչինյանը, Գևորգյան Հոգևոր Ճեմարանի տեսուչ Տ. Հայկազուն ծ. վրդ. Նաջարյանը, Էջմիածնի քաղաքապետ երվանդ Աղվանյանը, Մայր Աթոռի միաբաններ, պաշտոնատար այլ անձինք, մեծաթիվ արվեստասերներ:

Նկարների ցուցադրումը շարունակվեց մինչև սեպտեմբերի 4-ը:

ՄՈՒՇԵՂ ԱՐԿ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ